ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա. ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը որոշեց.

ՀՀ ՆԳՆ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-49-1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերությանը ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ՆԳՆ և «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերության միջև 21.06.2024թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-49-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով: Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ մասնակիցը մատակարարման փուլում պետք է տրամադրի «MAF» կամ ՀՀ-ում ավտորիզացված «DAF» հավաստագիր: Կողմերի միջև 21.11.2024թ.-ին կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի 1.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1 կետով սահմանված 17 690 611.20 ՀՀ դրամ գումարից հաստատվել է 17 690 610.99 ՀՀ դրամ գումարը: Պայմանագրի 2.1.2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա պատվիրատուն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7-րդ կեի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերության կողմից, Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելուց հետո, նույն պայմանագրի 5-րդ բաժնով սահմանված կարգով, 31.01.2025թ.-ին www.armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է հանձման ընդունման արձանագրությունը, ակտը, էլեկտրոնային հաշիվը և ապրանքի ավտորիզացված հավաստագիրը:

Պատվիրատուն ուսումնասիրելով www.armeps.am համակարգի միջոցով ներկայացված փաստաթղթերը, արձանագրել է, որ Վաճառողի կողմից ներկայացված ապրանքի ավտորիզացված հավաստագիրը չի հանդիսանում MAF կամ ՀՀ-ում ավտորիզացված DAF հավաստագիր, ինչով պայմանավորված Վաճառողին 07.02.2025թ.-ին տրվել է բացասական եզրակացություն, ինչի մասին նույն օրը Վաճառողի e.g777@inbox.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է բացասական եզրակացությունը և արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումը՝ վերջինիս տալով ողջամիտ ժամկետ այն շտկելու համար: Սակայն Վաճառողի կողմից տրված ողջամիտ ժամկետում, այն է՝ 26.02.2025թ.-ի դրությամբ որևէ շտկում չի կատարվել:

Վերոնշյալով պայմանավորված՝ Վաճառողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ ապրանքը մատակարարել է Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի խախտմամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-49-1 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր 88453.05 /ութսունութ հազար չորս հարյուր հիսուներեք դրամ և հինգ լումա/ ՀՀ դրամ և 159215.50 /հարյուր հիսունինը հազար երկու հարյուր տասնհինգ դրամ և հիսուն լումա/ ՀՀ դրամ սահմանված տուգանքը և տույժը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 3 004 950 /երեք միլիոն չորս հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 2 003 300 /երկու միլիոն երեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N 900005000758 հաշվեհամարին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Որոշման հիմք է հանդիսանում ծանուցում ստանալուց հետո՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, սահմանված տույժ ու տուգանքը և որակավորման ու պայմանագրի ապահովումները ՀՀ ՖՆ գործառնական վարչության հաշվեհամարներին չվճարելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՖԻԴԱՆՅԱՆ**

«10» «03» 2025թ.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեությա ն հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի մասնակի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ	ՀՎՀՀ 02315393	Ք. Երևան Ֆրունզե 13		ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-49-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ–ն չի կատարել պայմանագրով ստանձնած պայմանագրային պարտավորությունները, վերջինիս կողմից խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ ապրանքը մատակարարել է Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի խախտմամբ:		ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/Լ-49-1 Պատվիրատուի ղեկավարի «10»«03»2025թ. որոշման համաձայն